

Վ.ՍՐՉՈՒԹԻՒՆ ԿՆՈՐ ՕՐԻՑ

ՆԱՄԱԿ ԿԱՏ ՈՒՄ ԲԳՔՈՒՑՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՏԵՐ Լ ՈՒՂՂՈՒՄ  
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի  
ՔԱՀԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire  
Չեապոլիսի կա չեա զարմար,  
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆԻՆԷ

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Ք Ի Ր  
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇՍԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺՈՒՆԸՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊԻՊՏՈՍ	
Գանձարի համար	50
Վեցամսեայ	30
Շրջակայից	60
Վեցամսեայ	35
ԱՐՏՕՆԱՏԱՆԻ ՇՍԲԱԹ	
Տարեկան	Ֆրանկ 48
Վեցամսեայ	10
ՌՈՒՍԻՅԵՆ ԵՒ ԱՊՊՍՏՈՒՆ ՇՍԲԱԹ	
Տարեկան	Րուբլի 7
Վեցամսեայ	4
ԲԱՐՍԻՍՏՐԱԿԱՆ ԿԱՆՈՒԿ Է	
ԵՒ ԹՂՔԱՏԱՐԻ ՇՍԲԱԹ	
Թեքիս վարչութեան վրայ և	

ՉՈՐԵՔՇՈՒԹԻ ՅՈՒՆ. 31/ 13ՓԵՏՐՎԱՐ 1901 ԲՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 66

## ՎԱՆՈՒՄԱԳԻՐՆԵՐՈՒ ՎԱԿԵՐԱՑՈՒՄԸ

Քանի մը ազգայիններ տեղ մը հաւաքուելով կրնան ընկերութիւն մը կազմել բարեգործական, կրթական կամ շահասիրական անուամբ:

Կրթասիրական ընկերութեանց կարգին մէջ կը դասուին Լսարանական, Ընթերցարանական ընկերութիւնները, դրական և գիտական ակումբները:

Շահասիրական ընկերութեանց կարգին մէջ կը մտնան խնայողական, և շահասիրական ընկերութիւնները:

Բարեգործական ընկերութեանց կարգին մէջ են, աղքատախնամները, սրբախնամները, սովելոց ընկերութիւնները և այլն:

Պահարկի մէջ կրթասիրական ընկերութիւն անուամբ գոյութիւն ունեցող միմիայն մէկ ընկերութիւն կայ որ է՝ Լսարան-Ընթերցատուն ընկերութիւն հայոց, ունենալով իր օսկանն «Նոր-Օր»:

Այս ընկերութիւնը մասամբ տեղը կը բռնէ Պահարկի նախկին Ընթերցասիրաց ընկերութեան, որոյ կետրոնատեղին էր Գլխաւոր Արմէնիէնը:

Շահասիրական ընկերութիւն անուամբ Սեբաստիոյ, Արապկերցիներու, և կեսարացիներու հաստատած ընկերութիւնները կան:

Իսկ բարեգործական անուամբ հետեւեալ ընկերութիւնները կան Պահարկի մէջ:

- 1.— Վասպուրականի Որբախնամ
- 2.— Արապկերի Որբախնամ
- 3.— Հոգատար Որբախնամ
- 4.— Ակնայ Որբախնամ
- 5.— Աղքատախնամ:

Այս ընկերութիւններուն ամենքնալ իրենց համար ուրոյն կանոնադրներ ունին զոր կրնան վաւերացնել տալ Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովին:

Նկատողութեան արժանի կէտ մը կայ հոս, որ երբ Որբախնամ Ընկերութիւն մը Ազգային Առաջնորդարանին կը դիմէ իր կանոնադրը վաւերացնել տալու համար, սոյն վեր-վերջինը իր վաւերացումը չը չնորհած կ'առաջադրէ կարգ մը պայմաններ:

Արդարեւ կան պայմաններ որ կըը-

նան ձուլուիլ բայց կան պայմաններ, ալ զոր ոչ օրէնքը և ոչ ալ ընկերութեան շահերը կրնան մարսել զիրար: Տե՛սէր ինչո՛ւ:

Ազգային վարչութեան Պատ. Քաղ. Ժողովը, կ'ըսէ, կը վաւերացնէ՝ Որբախնամի մը ընկերութեան կանոնադրը, այն պայմանաւ որ՝

«Որբախնամ և կամ Որբախնամը ընկերութիւնը երբ կ'ամ վեցա կամ անգամ մը իր գործառնութեանցը, հաշիւ տայ Ազգային Առաջնորդարանին, որ երբ այդ ընկերութեան Գործադիր Ժողովոյ կողմէն ո և է զեղծում գործուած է, Քաղ. Ժողովը իրաւունք ունենայ Ընթ. Ժողովէն պահանջել Գործ. Ժողովոյ լուծումը»:

Անշուշտ Առաջնորդարանը չը պիտի կրնայ արգարանալ այս կէտին մէջ, քանի որ ո և է օրէնքի և կամ հըրահանգի մը վրայ հիմնուելով չէ որ կը գործէ կոր, հազա պարզապէս ինքնաբերաբար:

Գիցուք թէ Առաջնորդարանը այս մասին կրնայ մէջտեղ բերել Ազգ. սահմանադրական օրէնքէն տրամադրութիւն մը և կամ Պատրիարքական հրահանգ մը, կարծեմ՝ միւսոյն գիտողութիւնը և կամ քննադատութիւնը պիտի կրնամ ուղղել այն ատեն՝ այդ օրէնքը և կամ հրահանգը յորինողներուն, և ոչ որ կրնայ մեղադրել զիս սրովհետեւ քննական է թէ Օրէնք մը և կամ հրահանգ մը, օրէնքի և կամ պաշտօնական հրահանգի անունը կըրած ըլլալով անպատճառ արդարութեամբ քաշխտած չի կրնար համարուիլ ոչ ալ արդար նշակուիլ, քանի որ օրէնքները զերմարդկային պատգամներ չեն, բայց եթէ մարդկանց խորհրդակցութեամբ յղացուած և ստեղծուած կանոններ են ժամանակին և միջավայրին պիտոյիցը վրայ չափուած, յաճախ բարեփոխուելու ենթակայ:

Ամենքս ալ գիտենք որ շատ անգամ օրէնք մը մէկ երկու տարուան մէջ քանի մը անգամ բարեփոխութեան կ'ենթարկուի. այս բարեփոխման պատճառը, անպատճառ ժամանակին և կամ միջավայրին պիտոյից փոփոխուելն չէ որ յառաջ կուգայ, երբեմն կը պատահին այնպիսի կէտեր որոնց վրայ օրէնքը դրուած ատեն չի

խորհուր, և վերջը գործադրութեան ժամանակ երթալով դէպքերը օրէնքագիրներուն ուշադրութիւնը կը գրաւեն, որով բարեփոխելու անհրաժեշտը կը զգան:

Ինչպէս որ կը պատահին այնպիսի պարագաներ ալ որոնք օրէնքին կողմէն նախատեսուած իսկ չեն ըլլար և ետքէն կ'աւելցուին:

Առնցյալ կը հետեւի թէ օրէնքին այս ինչ կամ այն ինչ կէտը քննադատելու ասպարեզը ազատ է միշտ մարդու համար:

Քանի որ այս այսպէս է, ուրեմն Առաջնորդարանին առաջարկած պայմանները կուզեն օրէնքի և կամ պատրիարքական հրահանգի վրայ հիմնուած ըլլան, կուզեն չըլլան միշտ իրաւունք պիտի ունենանք քննադատելու զանոնք և անոնց բարեփոխումը պահանջելու, բաւական է որ տրամաբանօրէն դատած ըլլանք:

Կրնայ ըլլար որ մեր դատողութիւնը մէջ յիշուած ըլլանք, որովհետեւ անոնալ ըլլալու յաւակնութիւնը չունինք, ազատ են պատասխանելու անոնք որ կը փափարին հերքել մեր ցոյցած ճշմարտութիւնները: Մենք կը պնդենք թէ՛ Առաջնորդարանը որբախնամ ընկերութեան մը կանոնադրը վաւերացուցած ըլլալուն համար, չի կրնար իրաւունք ունենալ իր բարձրագոյն հարցութեանը տակ առնել սոյն ընկերութեան գործողութիւնները և ոչ ալ իր վաւերացումը չնորհելու համար ատանկ պայմանի մը տակ կըրնայ ճնշել ընկերութիւն մը:

Ըստ օրինի պաշտօնական մարմին մը երբ իր պաշտօնին բերմամբ ունէ զաչինք մը և կամ գործողութիւն մը կը վաւերացնէ այդ զաչինքը և կամ գործողութիւնը վաւերացուցած ըլլալուն համար ունէ իրաւունք չունենար վաւերացնելին գործերուն միջամշտելու, ոչ ալ անոր վրայ բարձրագոյն հսկողութիւն պահանջելու. զօր օրինակ մի քանի հոգի տեղ մը կը հաւաքուին ու առևտրական անուամբ ընկերութիւն մը կը կազմեն, ու իրենց կանոնադրը վաւերացնելու համար կը դիմեն դատարան, ինչպէս որ վաճառական մը իր տետրակները, և ուրիշ մ'ալ իր մէկ պայմանագրութիւնը վաւերացնելու համար կը դի-

մեն ընթերիւն և կամ ձեռնհաս պաշտօնէին. ոչ որ կ'անդիտէ թէ այդ վաւերացնող մարմինները պարտաւոր են իրենց պաշտօնին բերմամբ անպայման կերպով վաւերացնելու ինչ որ իրենց ներկայացուցած է:

Տեսած չէ՞մ վաւերատուն մը և կամ վաւերապետ մը որ ըսէ ընկերութեան մը և կամ վաճառականի մը թէ՛ «ձեր ընկերութեան կանոնագիր և և կամ զաչինքը կը վաւերացնեմ»:

«Ձեր վաճառականական տետրակները վիզէ կընեմ», այն պայմանաւ որ այս ինչ ժամանակին ձեր առևտրական հաշիւները քննելու իրաւունք տար ինձ»:

Նոյնպէս ալ չեմ ուզեր ճանչնալ զիւրաւատուն մը և կամ զիւրաւագետ մը որ ըսէ բարեգործական ընկերութեան մը թէ՛:

«Ձեր կանոնագիրը կը վաւերացնեմ այն պայմանաւ որ ընկերութիւնը իր գործառնութիւններուն հաշիւ տայ Ազգային վարչութեան որպէսզի եթէ ու է զեղծում գործուած է հաշիւներուն մէջ, Ազգային վարչութիւնը իրաւունք ունենայ Ընթ. Ժողովէն պահանջել զեղծարար մարմնոյն լուծուիլ . . . »

Թերեւս առարկուի թէ ակնարկուած վաւերացումներուն մէջ տարբերութիւն կայ, թէ Ազգային Առաջնորդարանը աղքատներուն, որբերուն արդէն հոգ տանելու և զանոնք պաշտպանելու պարտականութիւն ունի, հետևաբար որբերու և աղքատներու հոգը ստանձնող ընկերութեան մը կանոնագիրը վաւերացուցած ատենն ալ իրաւունք ունի զղուշացուցիլ միջոցներ ձեռք առնել:

Շատ լաւ, կ'ըմբռնեմ:

Բայց ինչ որ ալ ըլլայ չեմ կրնար ենթադրել որ Առաջնորդարան մը իր մէկ բարձրագոյն հսկողութեամբ՝ այնքան նախանձախնդիր ըլլայ ընկերութեան յառաջադիմութեանը և յարատեւութեանը՝ որքան ընկերութեան մը Ընթ. Ժողովը որ ընկերութեան հոգին ու հիմն է, ուրիշ կը բխին ընկերութեան գործուն գիւտները և որմով միայն կրնան լուծուիլ:

Մինչև որ Ընթ. Ժողովոյ հաւաքական ձայնը չի բարձրանայ, և անոր կամքը չտրտոյալուի, Գոր-



կարմրեց : Եւ եւս պակաս մը շարի այլ տուներ , փանդատի պէս ձայն մը կը հասնէ : Իսկ եթէ փաշէ շատ ինչնէ անոր անբնական վրայ : ատենը կ'ակօն հազայ , իրենց անշնամարտի ծակախներէն մանրապետական կայրակներ յարուստ : Եւս :

### Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Վիկտորիա Թագուհոյն մահուան անթիւ , ցաւեցութիւն և մեծաբանքի արտայայտութեան մասնակցած են նաև Լոնտոնի հայերը :

«Նոր կեանք» Լոնտոնի Տէլի Նիւզ՝ Արարիկն անհրով կը գրէ :

Տէլի Նիւզ յունուար 30ի թուովը «Հայկական Հոգեհանգիստ մը» վերնագրին տակ , հետեւեալ անդեւութիւնները կը հազորդէ :

«Կիրակի օրը (յունուար 27) Լոնտոնի Հայերը Քիչպրի որբանոցին մատուցող համարմուտեցան իրենց վերջին յարգանքը մատուցանելու համար հանդուցեալ Վեհապետին : Իրենց բահանան , Տ. Թորոս Խառահակեան , որ այս նպատակաւ յատկապէս Մանչեսթըրն եկած էր , Սուրբ Պատարագ մատուց ըստ վեհաշուքի և մեծահանգեալ ծեսի Հայաստանեայց Եկեղեցոյ : Արարողութիւնը լաւ կատարուեցաւ : Մատուցող գրեթէ ամբողջապէս լեցուն էր երկու սեւեհ հայերով որոնցմէ շատ հեռու յանգեալքն էին , մասնակցելու համար : Պատարագի ատեն երգեր երգուեցան և սոցթներ ըսուեցան հանգուցեալ թագուհին հոգուն համար :

«Քարոզը Տ. Թորոս բահանան խոսեցաւ հայերէն լեզուով :

Անգլիական Թերթը այլ բարոյին իմաստը բնորոշութիւնը հրատարակած է : Հայ եկեղեցականը հանդուցեալ թագուհին բարեպաշտութիւնը , Ներմանդութիւնը , բարութիւնը գրուածով , անոր «մարդկորէն սխալանացը ներում և թողութիւն» կը հայցէ ու «երկնասար արքայութեան ալ արժանացում» :

### ՎԻԳՈՐԻԱ ԹԱԳՈՒՀՈՅՆ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Մեր ընթերցողներու հետարբերութեանը գոհացում մը տալու համար թէ քանի վեհապետներ և քանի ներկայացուցիչներ ներկայ էին Վիկտորիա թագուհոյն յուղարկուողութեան ու թաղման հանդէսին , կ'արատապենք հասնուի թէ ինչպէս կ'ընթացէ ի ներկայացուցչուցած ցանկը :

**ԿԵՐՄԱՆԻԱ** .— Վիչեմ կայսրը , Բրոսիկոյ (Քրոմանիոյ գահաժառանգը) , Բրուսիոյ Հանրի իշխանը : Պանթերայի Աստիք իշխանը : և արիւշ եթը մեծ իշխաններ և դուքսեր :

**ՈՒՍԻԱ** .— Չարեկիւք և Սերի մեծ դուքսը :

**ՅՐԱՆՍԱ** .— Փոն — ծովակալը : Տիպուս գործարար և բարձրատիման Ապստաներ :

**ԻՏԱԼԻԱ** .— Աստիկ դուքսը :

**ԱՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳՐԻԱ** .— Ֆրանսուս Ֆերտինան մտապոյն գահաժառանգ իշխանը :

**ՊԵՆՆԻՆԱ** .— Թագաւորը Լեօօրդ իշխանը և երկու կոմսեր :

**ՓՈՐՏՈՒԿԱ** .— Կարդուս Թագաւորը :

**ՅՈՒՆԱՏԱՆ ԵՒ ՆՈՐՎԵԿԻԱ** .— Գահաժառանգ իշխանը իր հետեւորդներով : Փոն ծովակալը և մեծ զորավար մը :

**ԵՒՐՊԱՆՈՒ** .— Ն. Բ. Խաթիւն եղբայրը Բրենս Մուհամմէտ Ալի բնակարանութեամբ և Մուհամմէտ Իպրահիմ բաշաները :

**ՀՈՒՆԴԱ** .— Վեց Պարոններ և դուքսեր :

**ՍՊԱՆԻԱ** .— Մանասի դուքսը , ծովակալը , և գնդապետ մը :

**ՏԱՆԻՍՏՐՈՒԿԱ** .— Գահաժառանգ իշխանը Թիւրքիա .— Թուրքան , Բարաթասորի և Նարվր բաշաները :

**ՄԻՍՏՅԱՆԱՆԱՆ** .— Ամերիկայի Լոնտոնի դեսպանը :

**ՊՈՒՂԻՍԻԱ** .— Պարսկուհի կոմսը : պաշտօնակալը և Վիկարոսի գործարարը :

### ՍՈՐՏԱՓԵՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ՄԸ

Գերմանացի Տօքթ. Անկէնսիկին անօրէն Բրուսիական մարզահատարի սենեակին , 1850 էն ի վեր պատահած պատերազմներու մէջ կորուսած մարդոց և ծախուած գումարներու վրայ հեռուեալ կը հրատարակէ :

Խրիմի պատերազմ 1854ին . 750 հազար հոգի մեռած , և 9,637 միլիոն հինգ հարի բ հաշար ֆրն . ծախս :

Իտալական պատերազմ . 1859ին՝ 45 հազար հոգի մեռած , և 1 միլեա 500 միլիոն ֆր . ծախս :

Տանքմարքայի պատեր . 1864ին՝ 3000 մարդ մեռած և 175 միլիոն ֆրն . ծախս :

Հիւսիս . Ամերիկայ 1861-65ին՝ 280 հազար հոգի մեռած , և 2 միլեա 700 միլիոն ֆրն . ծախս :

Հարաւ . Ամերիկ . 1861-65ին՝ 520 հազար հոգի մեռած , և 1 միլեա 500 միլիոն ֆրն . ծախս :

Աւստրիոյ Բրուսիական պատեր . 1866ին՝ 45 հազար մարդ , և 1 միլեա 380 միլիոն ֆրն .

Մեքսիկայի և Գուաթեմալայի պատերազմին 65 հազար . հոգի , 1 միլեա ֆրն :

Ֆրանս . Գերմ . պատեր . 1870 հազար հոգի , Ֆրանսացի և 15 միլեա ծախս : Գերման . 60 հազար հոգի , (ծախար չէ գրուած) :

Սերպ և Պուլիար պայտամարութիւն 15 հազար հոգի , 875 միլիոն ֆրն :

Ռուս և թիւրք պատեր . 250 հազար հոգի , 5 միլեա 615 միլիոն ֆրն :

Հարաւ Արիւկ . պատերազմ . 30 հազար հոգի , 41 միլիոն 750 հազար ֆրն . ծախս : Աֆրիկ . պատեր . 25 հազար հոգի , 66 միլիոն 250 հազար ֆրն . ծախս :

Թիւրքիա 1894-97ին 300 հազար հոգի :

Ամրոզ գումարը , 2 միլիոն 300 հազար հոգի և 66 միլիար 750 միլիոն . ֆրն . ծախս :

### ՄԵԼԻՔ Ս. ԴԱՒԻԹ ՊԵՅ

### ՀԱՐԵՄԷ ՄԸ ՆԵՐՍ

Գանտիոյ նախկին կառավարիչ և Ստիվանի թմկնապահ թէմիքը բաշան երեք հարիւր գեղանի կիներ ունի իր հարեմին մէջ ամեն ցեղէ :

Խափշիկուհիներու ըով՝ մարդու խելքը գլխին առնող . . . Ճարմուտ հիւներ : Սեւաշուի 2էրքէզուհիին զիմացը՝ գանգրահեր , ջլախտիկ Անգլուհին . Իտալուհիներ , Սպանուհիներ , Ռուսուհիներ , Ֆրանսուհիներ , Բոլիսիոնի մէջ աւելող են :

Այս վերջիններէն մին՝ Ժողեֆին Բլէրոն՝ աղբւր սպանիսալ մ'ըրբ է բաշային Ստիվանին թիկնապահը՝ անխոհեմարար՝ Իտալացի քեկուր (վերնաբարմե երգիչ) մը կը մտցնէ հարէմը , կիները զիրենք զի թող իրցիչը աւելի մտէն զիտելու համար (արովնեալ պատի մը ետեւէն մտիկ կընէին անոյ) սուս թուղթ մը կը շինէին , որուն մէջ բաշան — այն ատեն բաշայիւր — իր ստորոգրութեան տակ դեկորը թէյի կը հրուի : Փաշան երբ տուն կու գայ կ'իմանայ եղբու թիւնը — կ'եղբու թիւն

մը՝ զմարդը թիւն հաստար . — և առանց հարց ու փորձի գործի ներքեւ ներքինները լաւ մը ձեռքէ կ'ուտայ : Բայց Փաշան զինուորի կ'ըրայ կըր զմայլելի յանդուստր , Ժ զէֆին Բլէրոն կը յարանէթէ ինք և կ'ըր գործուած անիւրին հեղինակը :

Ինչպէն Ֆրանսուհին մահանալու հաստարութեան տարէն ինկած է հիւմայ իր այդ ըրածովը :

### ՀԵՈՒԳՐԱԿԱՆ ՔԱՂՈՒՍԸ

Փետր . 6/13  
Նիւ-Եօրքէն կը հեռագրեն թէ անիլիանական մը Իտալիա մեկնած է՝ Իտալիոյ Վիպիտո-Էմմանուէլ թագաւորը սպաննելու համար :

—Կ. Պլիս Տէմիք Հիսարի և Սեւանիկի մէջտեղ կ'երկաթուղին գծէն ելնելով 50 հոգի մաս արկածին զոհ զնայած են :

—Եւմէն արտամարտիւնը Եւմէնի մէջ երկաթուղի տարածուելու վրայ է և սպասուները զոյգել անկարելի եղած է հակուտակ հասած զօրաց օչնութեան :

—Պէսիկի մէջ բաղնաթիւ վաճաճաւատուներ և զբաժառուներ որ նախկինցած են վերջին մէկ երկու շաբաթուան մէջ , երկրագործական գատակարար մտաւորով է . տարածուած ընդհանուր է :

—Հոլանտոյի Ուիլհելմին թագուհւոյն ամուսնութիւնը տեղի ունեցաւ Փետր . 7ին :

—Սեւանիկէն կը հաղորդեն թէ Պուլիար աւազակներ , Ֆլորիսայցի մտերը յարձակած են Թարքերուն և Յոյներուն վրայ . արիւնահեղ կոխներ տեղի ունեցած են :

—Եւրոպա ապաստանող ժէճութիւրքերը՝ յառաջիկայ Ապրիլ 15/30 Լոնտոնի մէջ Ընդհանուր ժողով մը պիտի զու մարեն . ժողովին գումարման օրը գաղտնի կը պահուի կոր , ինչպէս նաև հատուցուելու վայրը :

—Վանէն կը հազար են թէ հարիւր յիսուն հայ ընտանիքներ իտալիա գաղթել փորձելով , սէրութեանց հիւպատոսները յանձն առած են զիրենք սպառնալու :

—Ռուսական թերթերը մեծու մտաւոր կը քննադատեն Մակեդոնական կոմիթէներու յիլափախական արարքը :

—Կոնկիւլէն , հանդուցեալ Վեգիթորիա թագուհոյն հորեղբոր սրգին , Սուտանի կուսակալութեան ընդհանուր քորտուսը անուանուած է և մ'օտերու կը սպասուի եղիպտոս :

### ՕՐՈՒՄԱՆ ԼՈՒՐԵՐ

Սուեիզի ջրանցիքը ընդլայնելու համար Պ. Լինաէն անպիացի երկաշաղի յատկապէս Լոնտոնէն Սուէիզ կ'եկած է , որ անցեալ շաբաթ նախապարտադրական փորձեր կատարած է ջրանցիքի մէջ ի ներկայութեան , ջրանցիքի ընկերութեան նախագահ՝ Բրենսոն Արիւսկըրի և Եգիպտական հանրապետ շնորթեանց նախագահի խորհրդական Պ. Վիլիամ Կարմիտի :

—Սուտանի Միջազգային Յանձնաժողովը անցեալ տարի 40,000 ոսկեայ սուղանք տալ որոշած էր այն ամէն Սուտանցիներուն որոնք պատերազմի ժամանակ ֆրանսուսներու հետ իրարմարտուած էին : Տր . Իպրահիմ Գուզամ , Ֆրանսիկ Գուզամ

(վաճառական իմաստը) , Սուտանի թղթակցութեանց գրասենեկի պաշտօնակներէն Սուտանի Լիբանի հետ քաղանի նամակ անցնելով , կեց թագուհի շինած ու յաջողած էին մինչև 3000 ոսկեայ գումար մը գանձել Միջազգային Յանձնաժողովին :

Յանձնաժողովը վերջը վերջը կտակածուով որ գործին մէջ կեցիք մը կայ կը յատարուէ ու ինչպէր երևան կը հանու :

Ասոր վրայ կատարութիւնը կը ձերբարկուէ սչ միայն վերոյիշեալ անձինքները , հասցա նաև սոյն գերդաստանին պատկանող բոլոր անդամները :

Հարցաքննութիւնը կը շարունակուի կոր ամենայն իստութեամբ Գահիրէի իրաւաբար Ատեանին Հարցաքննիչ գատարանին առջև , որոյ արդիւնքը յառաջիկային կը անկեկայնեն :

—Սոց-գոյ շակ մը , բոսած էր որ Վիկտորիա թագուհին 1901ին պիտի մեռնի , Ֆրանսուս-Ժոզէֆը 1902ին . Շուէտի թագաւորը՝ Օսկար՝ 1903ին : Հիմակ , մարդարեւ թեան մէկը կանարուեցաւ , մի աներն ալ հեռաւարտ պիտի կատարուին :

Ու Վիկտոր Էմմանուէլինը , չ'կատարուէլցաւ :

—Տեղից Մեծ Ղաաի Կամուլ-էս-տինի յաջորդը եկած է Պոլիէն , և ի պաշտօնին զլախը պիտի անցնի Մարտ 15էն սկսեալ : Պոլսոյ մեծ կայսրը թայիլ Բաֆաթ փոշա որ շատուց կը տառապէր , մեռեր է . անոր յաջորդ՝ ընտրուիլը , յամար չ'է դեռ :

—Տեղական պատարանը բրէնս Գաղէմ պէյ Տօք բոնտարիւթեան պատապարտուէ , հեռապարտան պաշտօնէ մը — որ իր գործով կ'ըրապէր — հայցելու համար :

### ՍՏԱՑՈՒՄ ԳՐԿԵՐ

Շնորհակալութեամբ ըստացանք Տ. Սուրէն Պարթևեանի «Խարազան» անուն գրքին Առաջին տպակն , հետեւեալ անգամ ակաթեանով :

Ինչպէս ըլլան . — Իրակի մը շարժը . — «Խարազան» տպագրուած է Բարիկ «Համալսարանի» տպարանը (1901 Յունվար) և գինն է մէկ ֆրանք :

«Թիւրքմանութեան տեղի շտաբ» համար , կը գրէ Տ. Պարթևեան , բոսած ըլլամ որ ԽԱՐԱԶԱՆը պարբերական թերթ մը չ'պիտի ըլլայ :

«Այս ընդհանուր տխուրտի տակ Բամբիլներու շարք մըն է , զոր պիտի հրատարակեմ պօստիւրի ձևով :

«ԽԱՐԱԶԱՆ» երկրորդ տպակն պիտի երևայ անվաղապէս երբ այս պրտակին արդիւնքը՝ ու իմ անձնական միջոցներու բաւեն տպագրութեան ծախսերուն :

Դիմել հետեւեալ հասցէին  
M. Sourène Bartévián  
137, Boulevard St. Michel  
PARIS

Տխար Սուրէն Պարթևեանի Խարազան գրքի տպակն , Լ. Ասարեանին կը գրէ :

«Պ. Սուրէն Պարթևեան իր Խարազանը հրատարակելէ տուջ շատ անգամներ զիմում ըրած է մեր տնօրէնին , որոյ գիտ հայերէն թերթ մը հաստատել անոր անոր աշխատակցութեամբ : «Ուր վնասեալ գաւր ամենէն ազգի զիտէր ազգային կեանքը , կ'ընէր անոր , դուր

քաղաքական-ազգային մասը կը գրեք: Ես, մեր գրագէտներուն ամենէն փայլունը, ես ալ պիտի ստանձնեմ գրական բաժինը:

Մեր թերթը Անահիտէն, Նոր Կեանքէն, և հայերէն ո՛ր թերթը կուզէ թող ըլլայ, աւերի կը յաջողի, և շատ դժբախտ կը շահինք: Հարկ չ'կայ ըսելու որ նման աշխատակցի մը առաջարկը բացարձակապէս մերժուեցաւ: Ահա թէ ինչու բռնկած է նա:

### Լ Ր Ա Ք Ա Ղ

Անգլիոյ Եւրոպայի Ա. Ա. Սուլթանին հրամանով մասնաոր պատուիրակութիւն մը կազմուած է Պետական Խորհուրդին քաղաքային ճիւղին անդամներէն Քիւրիան փաշա ու Ալեքսանդր փաշա Գարաթէօտօրի և զինուորական վարժարանին ուսուցիչներէն Նասրը փաշա, որպէսզի Լոնտոն երթան թէ՛ Վիլթօրիա թագուհին յուշարկարութեանը ներկայ գտնուելու և թէ՛ Էտուարտ թագաւորին դահակալութիւնը շնորհաւորելու: Օսմ. պատուիրակութիւնը երբ Միքէլէի կայարանը ժամանեց, Արեւելեան ձեւապնթագը մեկնած էր, բայց երկաթուղիի Ընկերութիւնը անմիջապէս մասնաոր կառախումբ մը պատուիրակութեան արամագրութեանը տակ գրաւ մինչև Քիւրիա-Չէքմէճէ երթալու համար, որ հեռագրուած էր Արեւելեան ձեւապնթայը սպասցնել օսմ. պատուիրակութեան ժամանելուն:

—Վիլհելմ կայսեր՝ ի յիշատակ Պօլիս ուղեւորութեան շիրիլ տուած ազդիւրը Սուլթան Ահմէտի հրապարակին հիւսիսային կողմը կառուցուած է, որով կը տեսնուի Տիւրան Եուրոպայի սրտայայտէն և Արաֆիայի հըրապարակէն: Աղբիւրը կը կազմէ կըր գմբէթ մը որ սիւներու վրայ զետեղուած է, ոտոնք ալ կառուցուած են ստորին մասին վրայ, որուն արտաքին մասին վրայ կը գտնուին ծորակները: Ստորին մասը, ու թանկիւն ձեռով, ցած է, ու կը մտնուի քանի մը աստիճաններէ բաղկացած սանդուխի մը միջոցաւ: Սիւները ու թ հաս են, Գմբէթին ներքին մասին մէջ կան թուրքէի արձանագրութիւններ Մորակները Եօթը հատ են, և ու թերթը կողմը յատկացած է սանդուխին: Սանդուխին ճակատը կայ պղինձէ տախտակ մը սա գերմաններէն արձանագրութեամբ:

«Գերմանիոյ Վիլհելմ Բ. կայսրը այս աղբիւրը շինել տուաւ, իբրև երախտագիտական յիշատակ մը այն տեսակցութեան զոր 1898ի աշնան ունեցաւ Օսմանեանց Վեհապետ Սուլթան Ապա-Իւլ-Համիտ Բ. ի հետ»:

—Կոնստանդուպոլիս նահանգի Բրայլպորտ քաղաքում վճռուած է համալրող բարձրակարգ արդեւելք և յանցարարին պատժել եթէ տղամարդ է՝ 40 մարտի խփելով, իսկ եթէ կին է՝ 30: Ի հարկէ խօսքը հրապարակական համալրութեան է: Բանն այն է, որ տեղի համալրարանի ուսանողները զեղեցիկ սովորութիւն են արած եղել փողոցում:

Հանդիպած զեղեցիկի օրհորհներին բռնել ու մի կուշա համարել: Երևի կը գտնուին քաղաքատաներ, որոնք համալրող կը գերադասեն խարաղանի 40 հարուածին:

ՆՈՐ-ՂՈՐ

### ԿՈՒՋԷՔ ԲԱՂԴԵՐՆԻԴ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք ժողովրդական Տարեցոյցէն հատ մը, ուր շատ մը զուարճայի և օգտակար հատուածներու հետ կը գտնուի նաև զեղեցիկ բաղդացոյց մը պէտք եղած բացատրութեամբ:

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց գնել փափաքողը թո՛ղ հաճին գիմել առ Տ. Օհան Խնամեան, որ պատրաստ է ուրիշ ամեն տեսակ գրքերու մասին յանձնարարութիւնք փութով կատարել փոքրիկ կանխավճարով մը: Երջակայ քաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարարութեան համար գրածի տեղ թըրջվազրոյժ կընդունուի:

Տարեցոյցի գինը 40 Ղրջ ողջ  
Պարզ օրացոյցինը 2 "

### Ա Ջ Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը զոհացում տալու և մեր ընթերցողներու զիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապա-Էլ-Ալիզի սիկզըր Պ. ԿԱՐՍՊԵՏ ԵՐՁՆԻՍՅԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գլոխ-Պէյ փողոցի ծայրը և թըրամպէյներու կայարանին մօտ ծխավաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՊԵԱՆԻ քով:

Le Gérant J. MUNIER

Տպա: «Միտրիւն».— Բ. Ս. Փափագեանի

### ՊԱՆԳ ԼԻՕՆԷՋ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութի գրամատուցը, այս անգամ ունեցաւ իւր Եղեպատի գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի բաղաքայեանութիւնէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և Քուէտի Ֆոնտիլի, Վիլ տը Տարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ: Ս. մասկան չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհետի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաստուած:

Փափաքողները հաճին գիմել Նիւպոսի վրայ փաստարան Ռարթաքիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ գըրկել հետեւայ հասցէին:

### Մ. ՍՕՍՕՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

### ԱՏԱՄԱՐՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաթէ ար լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գասիկոնը:

Կը բժշկէ բերնի և սկուայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազգաստները ձրի կը գարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

### ՊԵՍԵՆԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ. ՍՄԵՐԻԿԵԱՆ ԳԵՐՁԱԿՆԵՐ ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿԵԱՆՑ ԵՒ ԶԻՒՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապօրինի մեծ պողոտային վրայ Տայիւայի Սանիթի դիմացը, Եւրոպայի Եղեպատի գործիներու վաճառատներ:

Վերջերս Ամերիկայէն հաս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան իւր պատրաստ ենք գահացնել մեզ գիմոյ Պատ. յաճախողները, գործի մաքրութեան, զիններու շախմատութեան և ճշգրտագործութեան կողմէն:

Մեր գործատեւը այն մէջ կ'աւանդուին նաև ձեւապնթագրի գասեր ամերիկեան ամենավերջին կատարելադարձուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեւը:

### ՃԱՃԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ

### ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂՐ. ԳԱՋԱՆՃԵԱՆ

Շարա Խալու-Սուպան  
Նիեու-Տիւրիսի գեղարտեան դիմացը:

Օգտաւն ու զուարճայի գիրք մաքուր ու վայելուչ սպորտ համեղ ու մանրարար կերակուրներու զանազանութիւն, անխարդախ պատրաստութիւն. ճոխ ճաշացոյցակ մը գիրք մատչելի զիններով: ահա՛ Գաղանձեան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի գառնայ հայկական ճաշարանին:

**Տ Պ Ա Ր Ա Ն**

**Ի ԳԱՀԻՐԷ**

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

**ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ**

**ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ**

Սոյն նորակազմ սոլարանին մէջ կը սպուին հայերէն ու երոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւումներ, մահազգեր, հարանեաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակաղլուներ, պահարաններ, հաշուեցոյցակներ ևն:

Յանձնարարութիւններ կը կատարուին փութով, ամենուցե խնամով և ճշգրտաբար սպագրութեամբ:

**ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ**